ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 62-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 19-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N 385-Ն որոշման 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի N 2-Ն որոշման և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 270-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջները.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության /այսուհետ՝ ՀՀ ՆԳՆ/ քաղաքացիական ծառայողների և քաղաքացիական աշխատանք կատարողների մասնագիտական վերապատրաստման պայմանները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐՓԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

12.08.2025թ.
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ ներքին գործերի նախարարի
2025 թվականի օգոստոսի 12-ի
N 62-Լ հրամանի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն պայմաններով սահմանվում են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՀՀ ՆԳՆ) քաղաքացիական ծառայողների և քաղաքացիական աշխատանք կատարողների մասնագիտական վերապատրաստման հետ կապված հարաբերությունները:

2.Վերապատրաստման կազմակերպումը, մեթոդական ղեկավարումը և վերահսկումն իրականացվում է ՀՀ ՆԳՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչության կողմից՝ ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղարի կողմից հաստատված տարեկան ժամանակացույցի, ինչպես նաև ՀՀ ՆԳՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչությունում ստացված հայտերի և միջնորդությունների հիման վրա:

3.ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում անցկացվող վերապատրաստման արդյունքների հաշվառումը կատարվում է՝

1) հաշվառման էլեկտրոնային մատյանով (Ձև 1 կցվում է), որը լրացվում է տվյալ ոլորտի համար պատասխանատու գլխադասային կամ ինքնուրույն ստորաբաժանման կողմից.

2) «Կադրեր» էլեկտրոնային ինֆորմացիոն համակարգի միջոցով՝ ՀՀ ՆԳՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչության կողմից.

3) վերապատրաստման վկայականով, որը տրվում է ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի կողմից և կցվում է ծառայողի անձնական գործին:

4) քաղաքացիական ծառայության հարթակում ՀՀ ՆԳՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչության կողմից:

4. ՀՀ ՆԳՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչության կողմից՝ հաշվի առնելով տվյալ տարվա համար քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարիքները, նախագծվում է մասնագիտական գիտելիքների այն վերապատրաստման դասընթացները, որոնք կարող են նպաստել քաղաքացիական ծառայողի վերապատրաստման կարիքի

բավարարմանը և պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթների իրականացման արդյունավետության բարձրացմանը և ներկայացնում է այն ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղարին:

5. ՀՀ ՆԳՆ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարիքների գնահատումը իրականացվում է քաղաքացիական ծառայողի տարեկան կատարողականի գնահատման, ՀՀ ՆԳՆ կառուցվածքային ստորաբաժանումներից ստացված հայտերի և ՀՀ ներքին գործերի նախարարի կամ գլխավոր քարտուղարի որոշման հիման վրա:

6. ՀՀ ՆԳՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչության կողմից ներկայացված վերապատրաստման կարիքների հիման վրա ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղարը կազմում և քաղաքացիական ծառայության գրասենյակ համաձայնեցման է ներկայացնում ՀՀ ՆԳՆ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագրի նախագիծը:

7.Քաղաքացիական ծառայության վերապատրաստման ծրագրի նախագիծը համաձայնեցնելուց հետո ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղարը հաստատում է ՀՀ ՆԳՆ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման տարեկան ծրագիրը:

8. Քաղաքացիական ծառայողը վերապատրաստվում է գլխավոր քարտուղարի կողմից ընդունված անհատական իրավական ակտի հիման վրա:

9. Սույն կարգի 5–րդ կետում նշված կատարողականի գնահատականով պայմանավորված պարտադիր վերապատրաստման վերաբերյալ տվյալները հավաքագրվում են մինչև տվյալ տարվա փետրվարի 1–ը, ՀՀ ՆԳՆ կառուցվածքային ստորաբաժանումներից ստացված հայտերի տվյալները հավաքագրվում են ընթացիկ տարվա մինչև նոյեմբերի 30–ը՝ ՀՀ ՆԳՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչության կողմից ուղարկված հարցումների հիման վրա, իսկ ՀՀ ներքին գործերի նախարարի կամ գլխավոր քարտուղարի որոշմամբ կազմակերպվող վերապատրաստումների տվյալները հավաքագրվում են ըստ պահանջի:

10. ՀՀ ՆԳՆ համապատասխան ստորաբաժանման վարորդական վկայական ստանալու համար որակավորման գործնական քննություն ընդունող քննական մարմնի աշխատակիցների վերապատրաստումը կազմակերպվում է ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում երկու տարին մեկ անգամ՝ չորս օր տևողությամբ և հինգ տարին մեկ անգամ՝ հինգ օր տևողությամբ ՀՀ ՆԳՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչության կողմից համապատասխան ստորաբաժանման ղեկավարին ուղարկված և իր կողմից լրացված հայտի հիման վրա:

11. Քաղաքացիական ծառայողը վերապատրաստումների արդյունքում ստանում է կրեդիտներ:

12. ՀՀ ՆԳՆ քաղաքացիական ծառայողների անհատական ծրագրերում ներառված առկա ուսուցման դասընթացները և հեռավար ուսուցման մոդուլները անցկացվում են ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում, անհրաժեշտության դեպքում կարող են անցկացվել նաև այլ ուսումնական հաստատություններում ու կազմակերպություններում:

13. Քաղաքացիական ծառայողը տարեկան վերապատրաստման ծրագրից բխող վերապատրաստման անհատական ծրագրում նախատեսված կրեդիտները ստանում է տվյալ վերապատրաստման առկա դասընթացը կամ հեռավար ուսուցման մոդուլը թեստավորման միջոցով հաջողությամբ ավարտելուց հետո:

14. Վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները երկու տարի անընդմեջ իր մեղքով չստանալու դեպքում քաղաքացիական ծառայողի լիազորությունները դադարում են:

15. Վերապատրաստման դասընթացներն ավարտած քաղաքացիական ծառայողներին և քաղաքացիական աշխատանք կատարողներին տրվում է սահմանված նմուշի ավարտական փաստաթուղթ՝ վկայականներ (Ձև 2 և Ձև 3՝ կցվում է):

16. ՀՀ ներքին գործերի նախարարի կամ գլխավոր քարտուղարի հրամանով ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում ՀՀ ՆԳՆ քաղաքացիական ծառայողների և քաղաքացիական աշխատանք կատարողների համար կարող են կազմակերպվել տարեկան վերապատրաստման ծրագրից դուրս ուսումնական դասընթացներ, վերապատրաստումներ, սեմինարներ, գործնական, սպորտային, մարտական և այլ տեսակի ուսումնական պարապմունքներ (այսուհետ՝ ուսումնական պարապմունքներ):

17. ՀՀ ՆԳՆ քաղաքացիական աշխատանք կատարողների վերապատրաստումը կազմակերպվում է ըստ պահանջի ՀՀ ՆԳՆ ստորաբաժանումներից ստացված հայտերի հիման վրա:

18.Վերապատրաստման յուրաքանչյուր տեսակի համար ուսուցման կոնկրետ ժամկետները և բովանդակությունը որոշվում է ուսումնական պլաններով ու առարկայական թեմատիկ պլաններով, որոնք մշակվում են ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի և Ոստիկանության շահագրգիռ ստորաբաժանումների հետ համատեղ:

19. Վերապատրաստման ուսումնական պլանը հաստատում ՀՀ ներքին գործերի նախարարը կամ գլխավոր քարտուղարը, իսկ վերապատրաստման առարկայական թեմատիկ պլանը՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ղեկավարը:

20. ՀՀ ներքին գործերի նախարարի կամ գլխավոր քարտուղարի հրամանով ՀՀ ՆԳՆ քաղաքացիական ծառայողները և քաղաքացիական աշխատանք կատարողները կարող են մասնակցել այլ ուսումնական հաստատությունների ու կազմակերպությունների կողմից կազմակերպված ուսումնական պարապմունքներին:

21.Ուսումնական պարապմունքների կազմակերպումը, դասընթացների մեթոդական ղեկավարումը և վերահսկումն իրականացվում է ՀՀ ՆԳՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչության կողմից:

22.Կազմակերպվող ուսումնական պարապմունքի հաշվառումը իրականացվում է «Կադրեր» էլեկտրոնային ինֆորմացիոն համակարգում ՀՀ ՆԳՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչության կողմից:

23. ՀՀ ՆԳՆ աշխատակիցների համար ուսումնական պարապմունքները կարող են կազմակերպվել նաև հեռավար:

Ձև 1

Վերապատրաստման
հաշվառման էլեկտրոնային մատյան

_____

/ստորաբաժանման անվանումը/

Հ/Հ	Ա.Ա.Հ	Ծննդյան օր, ամիս, տարեթիվ	Զբաղեցրած պաշտոնը	Ում կողմից է տրվել վերատատրաստման գործուղելու հրամանը, հրամանի համարը, օր, ամիս, տարեթիվը,	Վերապատրաստման ժամկետները	Վերապատրաստման թեման	Նշումների համար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն

Սույն վկայականը տրվում է _____

_____

(պաշտոն, անուն, հայրանուն, ազգանուն)

_____

_____

առ այն, որ նա _____

_____

(վերապատրաստման ժամանակահատվածի կամ ժամանակահատվածների սկիզբը և ավարտը)

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

անցել է վերապատրաստման դասընթաց

_____

(ուսումնական հաստատության անվանումը)

_____

_____

Մասնագիտական վերապատրաստման արդյունքները

Հ/Հ	Վերապատրաստման թեմայի (մոդուլի) անվանումը	Թեստավորման առաջադրանքներից ստացված տոկոսները
1.		
2.		
3.		
4.		
5.		

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտոր

_____ _____

(ստորագրությունը) (անուն ազգանուն)

Կ.Տ.

«____ » _____ 20 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐՈՂԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն

Սույն վկայականը տրվում է _____

_____

(պաշտոնը, անուն, հայրանուն, ազգանուն)

_____

_____

առ այն, որ նա _____

_____

(վերապատրաստման ժամանակահատվածի կամ ժամանակահատվածների սկիզբը և ավարտը)

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

անցել է վերապատրաստման դասընթաց

_____

(ուսումնական հաստատության անվանումը)

_____

_____

Մասնագիտական վերապատրաստման արդյունքները

Հ/Հ	Վերապատրաստման թեմայի (մոդուլի) անվանումը	Թեստավորման առաջադրանքներից ստացված տոկոսները
1.		
2.		
3.		
4.		
5.		

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտոր

_____ _____

(ստորագրությունը) (անուն ազգանուն)

Կ.Տ.

«____ » _____ 20 թ.